ՍԱՍՈՒՆԻ ԱՄԻՐԱՑՈՒԹԻՒՆԸ

Կտրուներ քաղուած Հայ պատմութիւնէն (*)։

«Թաթարներու միահեծան իշխանութիւնը Հայոց վրայ տևեց մինչև 14ոդ դարու կէսերը, երբ Մոնղոլների պետութիւնը կործանուեցաւ, որի կենդրոնն էր Կարակորում կոչուած մեծ քաղաքը Բայկալեան լճի վրայ՝ ու այլևայլ անկախ տէրութիւններ կազմուեցան (1340)։

Այդ միջոցին Պաղտատ նստող Մանգոյ խանին եղբայրը Հալուդի յաջորդի իշխանութեան տակ կը գտնուէր Հայաստանը. Հնայած ատոր, երկրի զանազան գաւառների մէջ այլևայլ մեծ ու փոքր իշխանութիւններ կազմուեցան, մասամբ Բաղտատի խանին հարկատու, մասամբ անկախ։ Արևմտեան կողմը բռնեցին Թիւրքմէնները, հարաւային կողմը գրաւեցին Քիւրդ բէգերը Սասունի գլխաւոր Ամիրայի իշխանութեան տակ մինչև Լէնկթիմուր։»

Այստեղ պատմութիւնը կը լռէ թէ ի՞նչ ցեղի կը պատկանէր Սասունի ամիրան, ի՞նչ էր կրօնը. միայն իր անհատական իշխանութիւնն էր որ հաստատել կը կամենա՞ր, թէ ունէր ցեղական նպատակներ։

«(1387) Լէնկթիմուրի արշաւանքին Հայաստանի մասերէն, աւելի դիմացողն եղաւ Սասունի տէր Դարա—Եուսուֆ Քուրդը. որի իշխանութեան տակ կը գտնուէր երկրի հարաւային մասը, բայց ի վերջոյ նա էլ ընկճուեցաւ ու սկսաւ Հայաստանէն փախիլ։ Անտանելի էր ժողովրդի վիճակն, այս տագնապալիր կռիւներու ժամանակ. ով որ Թաթարներու արէն կ'ազատուէր, տխրուած էր իր Քուրդ իշխանի կամքը կատարելու համար՝ անդադար մէկ տեղէն միւսը փոխադրուիլ. Մի Մշեցի կին ասպատակողների ձեռքը չիյնալու համար, անոր

(*) Պալասանեանի Հայ. պատմութիւնը. (կովկասեան տիպ.)